Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

23186

# Հ Ա Վ Ա Ք Ա Կ Ա Ն
# Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ԿՆՔՎԱԾ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅԵՐՔԱՂԽՈՐՀՐԴԻ ՏԵՂՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

331.11:69
Ա-89

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 3 1

33Բ11:69
Ա-89

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ԿՆՔՎԱԾ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՑԵՐՔԱՂԽՈՐՀՐԴԻ ՏԵՂՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

1499

ՅԵՐԵՎԱՆ 1933

Гос. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
12305-27

25 FEB 2013

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼԻՏ 6511 (բ)
ՊԱՏՎԵՐ № 2829
ՏԻՐԱԺ 250

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## (ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ)

1. *Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ կողմից Հայաստանի Կառուցող բանվորների անունից Կառուցողների Արհմիության Կենտրոնական Վարչության, (որը հետագայում կոչվելու յե «Միություն») հանձին նրա ներկայացուցիչ* ԱՐՄԵՆԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ *և մյուս կողմից Յերևանի Քաղխորհրդի Տեղական Տնտեսության բաժնի վարիչ* ՎԱՐԴԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ *միջև:*

2. *Սույն հավաքական պայմանագրի նպատակն է ապահովել բանվոր դասակարգի առաջ դրված խնդիրների ավելի քան արագ կերպով կատարումը, ժողովրդական տնտեսության վերակառուցման, յերկրի ին-վերակառուցման բնագավառներում, ու անշեղորեն և դուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական բազ կերպով բարելավելու Հ.Ս.Խ.Հ. կառուցող բանվորների և ծառայողների նյութական, կուլտուր-կրթական և սոցկենցաղային պայմանները:*

3. *Ըստ սույն հավաքական պայմանագրի 2-րդ կետի տեղ.տնտեսության շինարարական աշխատանքների վրա որավարձով գործարքային աշխատանքներում զբաղված վարչատնտեսական կազմը, բոլոր ճարտարապետատեխնիկ աշխատավորները և բանվոր-ծառայողները իրենց վրա պարտավորություն են վերցնում լրիվ կերպով կատարելու և գերակատարելու 1931 թ. արդֆինպլաններով նախատեսված քանակային և որակական ցուցանիշները, արտադրության պրոցեսների ճիշտ կազմակերպմամբ, հարվածային աշխատանքների մեթոդի կազմակերպմամբ, պրոլետարական դիսցիպլինայի ամ-*

բացման և ունենալ կոմունիստական վերաբերմունք
դեպի աշխատանքները. դրա հետ միասին Տնտմարմի-
նը պարտավորվում է ապահովել անհրաժեշտ արտա-
դրական պայմանները, այդ խնդիրներն ի կատար ածե-
լու, ինչպես և պարտավոր է անպայման և իր ժամանա-
կին կատարելու սույն պայմանագրի բոլոր կետերը, աշ-
խատավարձի կարգավորման, աշխատանքի իրավական
պայմանների վերաբերյալ, միաժամանակ աջակցելու
բարելավելու բանվորների կուլտուրական սոցկենցաղա-
յին և բնակարանային պայմանները:

4. 1931 թ. վարչությունը պարտավորվում է կի-
րառել հետևյալ միջոցառումները՝

ա. Տնտեսական տարվա առաջին իսկ ամսից, ապա-
հովել արտադրության զարգացումը, համաձայն արդ-
ֆինպլաններով նախատեսված չափի:

բ. Սույն պայմանագիրը ստորագրելուց 15 օրվա
ընթացքում արդֆինպլանը հասցնել կառուցվող շենքե-
րին, գործարաններին և ցեխերին, իսկ 20 օրվա ընթաց-
քում հասցնել այն մինչև ագրեգատը, ստանոկը, ան-
հատ բանվորը:

գ. Արդֆինպլանով նախատեսված ռացիոնալացման
միջոցները կիրառելուն զուգընթաց, պարտավոր է տըն-
տեսական օրվա ընթացքում կիրառել նաև այն մի-
ջոցները, վորոնք կառաջադրվեն բանվորների, ճարտա-
տեխնիկների և ուրիշների կողմից, օժանդակելու պլա-
նի գերակատարմանը միևնույն ժամանակ առանց
հետաձգելու կիրառել կյանքում բանվորների գյուտա-
րարությունները:

դ. Սույն հավաքական պայմանագիրը ստորագրե-
լուց 50 օրվա ընթացքում վորոշել գործադրվող շինանյու-
թերի, հումույթի, վառելիքի և էլեկտրոէներգիայի
չափը և կազմակերպել ներքին հսկողություն վորոշված
նորմաների կատարման և նյութերի ու պատրաստված
գործերի վորակը ստուգելու համար:

ե. Կազմակերպել պլանային աշխատանք կորուստ-
ների դեմ պայքար մղելու թե արդյունաբերության և
թե շինարարության մեջ:

զ. 30 օրվա ընթացքում մշակել հրահանգ, տասնա-



պետների, ցեխային վարպետների և նրանց ոգնական-
ների իրավունքների ու պարտականությունների մասին,
միանձնյա ղեկավարության սկզբունքը կիրառելու նպա-
տակով. միաժամանակ ուժեղացնել վարչական և տեխ-
նիքական աշխատավորների պատասխանատվությունը,
ինչպես շինարարության և գործարանում զբաղված
բանվորների մեջ, իրենց հանձնարարված աշխատանք-
ները կատարելու հանդեպ.

է. Ապահովել սույն պայմանագրով նախատեսված
բոլոր աշխատանքների կատարումը մանավորապես
աշխատավարձի, աշխապաշտպանության պայմանները և
աշխատավորների աշխատանքի պայմանների առողջա-
ցման գործը.

ը. Վոչ ուշ ամեն ամիս 28-ից տալ հետևյալ ամսի
արտադրական աշխատանքի պլան բոլոր ցեխերին, և ա-
մեն մի հնգօրյակի սկսվելուց առաջ նույնը տալ բրի-
գադներին և բանվորական ավելի փոքր միավորներին:

թ. Արդֆինպլաններով նախատեսված ռացիոնա-
լացման միջոցների գործադրելու հետ զուգընթաց ան-
պայման գործադրել նաև այն միջոցները, վորոնք սույն
պայմանգրի գործելու ընթացքում կառաջարկվեն
բանվորների և ճարտարապետ-տեխնիկ. աշխատողնե-
րի կողմից և վորպիսի առաջարկները հավանություն
գտած կլինեն վարչության կողմից:

ժ. Կազմակերպչական և տեխնիկական օժանդակու-
թյուն ցույց տալ հետագայում ավելի ևս ծավալելու և
ամրացնելու սոցմրցումը և հարվածայնությունը:

ժա. 2 ամսվա ժամանակի ընթացքում կազմակեր-
պել պլանային հետախուզական աշխատանքներ տեխն.
նորմիրովկայի բյուրոյի համար արտադրության ռացիո-
նալացման, արտադրողականության բարձրացման, և
աշխատանքները նորմիրովկայի յենթարկելու նպատա-
կով:

ժբ. Ապահովել շինարարական աշխատանքները ամ-
բողջ տարվա ընթացքում, ստեղծել մշտական բանվորա-
կան կադր և ուժեղացնել աշխատանքների մեքենայա-
ցումը և ստանդարտիզացիա մտցնել շինարարության
մեջ. շինարարական ժամանակի ամբողջ ընթացքում ա-

պահովել չինանյութերի անընդհատ մատակարարումը·
քանուժի ռեալ օգտագործումը ինչպես և ներքին միջոց-
ների օգտագործումը:

ժգ. Սոցմրցման և հարվածայնության հետագա
զարգացման համար միջոցներ ստեղծել առաջին հերթին
տալով հարվածայիններին ամենալավ հանրակացարան-
ները և արտադրության մեջ աշխատելու լավ հնարա-
վորությունները:

ժդ. Բաց թողնել անհրաժեշտ միջոցներ բանվորնե-
րի վորակը բարձրացնելու համար:

ժե. Կատարել ճիշտ և կանոնավոր հաշվառում՝
սոցմրցման, արտադրողականության բարձրացման, ցու-
ցադրելով ստացված էֆֆեկտները:

ժզ. Հատկացնել սոցմրցման ֆոնդից պարգևատր-
ման համար ֆոնդ 1500 ռ. գումարի և պարգևավորել
արժանիներին:

ԾԱՆՈԹՈՒԹ. 1. Տնտմարմինները պարտավոր են կազ-
մակերպել հարվածային բրիգադներ, այն հաշվով, վոր հա-
մապատասխան վորակի խմբեր կազմակերպվեն:

ԾԱՆՈԹՈՒԹ. 2. Շինարարկան հետ ընկած կարևոր
միավորներին ուժանդակելու համար, վարչությունը և տեղ-
կոմը պարտավոր են կազմակերպել հարվածային բրիգա-
դաներ տվյալ շինարարության լավագույն հարվածայիննե-
րից:

## ԳՈՐԾԱՐԿՈՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

ա. Վճռական կերպով ամրապնդել աշխդիսցիպլի-
նան, պայքարել պրոգուլների, պոկողականության դեմ

բ. Պարբերաբար հսկել արդֆինպլանի կատարման
քանակական և վորակական ցուցանիշներին, վորի հա-
մար յենթարկել մոբիլիզացիայի ձեռնարկության ամ-
բողջ բանվորությանը, սոցմրցման և հարվածայնու-
թյան ծավալման և ամրացման, ինչպես և արտադրա-
կան խորհրդակցությունների և գյուտարարության մի-
ջոցներով:

Գործարանի վարչության հետ միասին կազմել և



պարբերաբար ինֆորմացիա տալ բանվորությանը սոց-
մրցման ու հարվածայնության ընթացքի մասին: Գործ-
նական ուժանդակություն ցույց տալ վարչությանը հե-
տամնաց շինարարական մասերին ոգնելու գործում, վե-
րացնել արդֆինպլանների իրագործման բոլոր դժվարու-
թյունները:

գ. Իրագործել և կազմակերպել մասսաների հսկո-
ղությունը յերկու կողմերի վրա էլ, սույն հավաքա-
կան պայմանագրի համաձայն նրանց հանձնարարած
պարտավորությունների ճիշտ կատարման համար ձեռք
առնել ամեն տեսակի միջոցներ՝ պայմանը խախտող
կողմերի և անհատների վերաբերմամբ:

Գործարկոմը պարտավոր է՝

Հարվածային բրիգադներին պարբերաբար հրահան-
գել և ղեկավարել ՃՏՍ–ի միջոցով կազմակերպել հար-
վածայինների և սոցմրցման մասնակցողների համար
տեխնիկական ուժանդակություն: Կազմակերպել խմբա-
կային արտխորհրդակցություններ և ճարտ. տեխ. աշ-
խատավորների ու վարչության մասնակցությունը այդ
խորհրդակցություններում ապահովել: Ճարտ. տեխնի-
կական աշխատավորներն էլ իրենց հերթին պարտավոր
են իրենց խմբակների արտադրական խորհրդակցու-
թյուններին մասնակցել թե անհատորեն և թե խմբակի
հետ միասին, մրցման մեջ մտնել արտադրական խնդիր-
ների և ռացիոնալացման լավագույն կատարելու հա-
մար:

Ճ.Տ. բոլոր աշխատակիցները բանվորները և ծա-
ռայողները, վորոնք ավարտել են այս կամ այն վորա-
կավորման դասընթացները, պարտավոր են տվյալ ձեռ-
նարկությունում աշխատել վոչ պակաս 3 տարուց:

5. Բանվորները և ծառայողները իրենց հերթին պար-
տավոր են՝

ա. Միանգամայն վերացնել առանց հարգելի պատ-
ճառների կրկնվող պրոգուլները, լրիվ օգտագործել
բանվորական որը, ձգտել գերակատարելու տրված ար-
տադրական պլանը, միաժամանակ լավացնել գործի վո-
րակը:

բ. Կահավորությունը և գործիքները լավ պահպանել, տնտեսաբար գործադրել հումույթը և նյութերը, թույլ չտալ սահմանված չափից ավել ծախսել բանուժը, նյութերը, հումույթը և այլն:

գ. Ամեն կերպ բարձրացնել արտադրության վորակը, բարեխիղճ վերաբերմունքի շնորհիվ վերացնելու բրակը և փոխադարձ հսկողություն ունենալ միմյանց վրա:

դ. Վարչության կարգադրությունը ժամանակին կատարելով, աջակցել միանձնյա ղեկավարության սկզբունքի կիրառմանը:

ե. Պարբերաբար բարձրացնել իր վորակը, հաճախելով պոլիտեխնիկական դասընթացներ, դպրոցներ, խմբակներ և այլն:

զ. Անպայման կատարել ներքին կարգապահության կանոնները:

է. Մինչև տարվա վերջը իր ցանկությամբ չթողնել գործարանը, ձեռնարկությունը կամ շենքը և պայքար տանել շուռ-շուռ, տեղից-տեղ փոխադրվողների դեմ: Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 33 տոկոսով, ինքնարժեքը իջեցնել 11–12 տոկոսով:

թ. Վերացնել բանվորների մեղքով առաջացած բրակ աշխատանքները և նրանց վերաշինելու յերևույթը:

6. Սույն հավաքական պայմանագիրը տարածվում է ձեռնարկություններում և շենքում աշխատող բոլոր բանվորների և աշխատավորների վրա և թե պայմանագրի գործելու ընթացքում նոր ընդունվողների վրա, ինչպես և նույն ժամանակաշրջանում նոր սկսվելիք ձեռնարկությունների վրա, անկախ վարձելու ժամանակամիջոցից:

ԾԱՆՈԹՈՒԹ. Չի տարածվում ժամանակավորապես աշխատավորների վրա, բացառությամբ արձակուրդ գնացողների և հիվանդների տեղ աշխատողների: Ժամանակավորապես աշխատողների վրա պայմանագրի փոխարեն տարածվում գործող օրենքները (Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. հունվարի 14-ի վորոշումը):



Շինարարության մեջ աշխատող մնացած բոլոր աշխատավորների վրա սույն պայմանագիրը տարածվում է նույնիսկ, յեթե նրանք վարձված են ժամանակավորապես:

7. Ժամանակավոր աշխատավոր վարձելու դեպքում վարչությունը պարտավոր է գրավոր ձևով հայտնել աշխատողին ժամանակամիջոցի մասին:

8. Հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով սկսած 1931 թ. հունվարի 1-ից, մինչև 1931 թ. դեկտեմբերի 31-ը: Այս պայմանագրի ուժի մեջ մտնելու որից սկսած 1929–30 թ. նախկին պայմանագիրը կորցնում է իր ուժը:

9. Պայմանագրի գործելու ժամանակամիջոցում նրա առանձին կետերը կամ մասերը կարող են փոփոխության յենթարկվել միմիայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հետին թվով չի թույլատրվում այնպիսի փոփոխություն մտցնել սույն պայմանագրի մեջ, վոր վատացնում է աշխատանքի պայմանները:

Յեթե մինչև սույն պայմանագրի ժամանակամիջոցը լրանալը նոր հավաքական պայմանագիր չի կնքվում, բանվոր-ծառայողների աշխատանքի պայմանները կարգավորելու յեն սույն պայմանագրով:

Աշխատանքի պայմանների բարելավումը, վոր նախատեսվելու յեն նոր պայմանագրի մեջ, ուժի մեջ են մտնելու նոր պայմանգրի գործելու որից:

## ԿԱԴՐԵՐ

10. Ազատ պաշտոնների կամ աշխատանքի տեղերի ինչպես նոր ընդունելություններ կատարելու դեպքում, վարչությունը պարտավոր է առաջին հերթին առաջ քաշել ավելի վորակյալ հարվածայիններին, թե բանվորներից և թե ծառայողներից, վորոնք պատրաստվել են տվյալ աշխատանքի համար առաջնությունը տալով վորակյալներին և տվյալ ձեռնարկությունում ավելի յերկար ժամանակ աշխատողին:

11. Բանվորների և ծառայողների ընդունելությունները կատարվելու յեն միայն Աշխժողկոմատի կադրերի վարչության կամ նրա տեղական մարմինների միջոցով, վերջինս հրաժարվելու դեպքում, վարչությունը կարող ե կողմնակի մարդկանց ընդունել, վորը նախորոք պետք համաձայնեցնել տեղկոմի հետ:

Առաջին հերթին ընդունվում են աշխատանքի՝

ա. Արհմիության անդամները և նրանց հետ հավասարեցվածները:

բ. Զորամասայինների վորդիները, անչափահասները, կանայք, քույրերը և յեղբայրները, իսկ վոչ զորամասայիններից նրանք, վորոնք վոչ պակաս յերեք տարուց աշխատել են տվյալ ձեռնարկությունում: Բացի այդ տնտմարմինը պարտավոր ե առաջին հերթին ընդունել չին. աշխատանքի այն բանվորներին, վորոնք ավարտել են կենտրոնական ինստիտուտը (ՑԻՏ) և ուղարկված են աշխատանքի Աշխժողկոմատի որգանների կողմից համաձայն Տնտմարմնի պահանջի:

Անկախ Աշխժողկոմատի կադրերի վարչությունից գործարկոմ, բանկոմ, խմբկոմի համաձայնությամբ կարելի յե ընդունել հետեվյալ պաշտոններին (տես կցված ցուցակը):

12. Ամեն մի նոր ընդունվող բանվոր-ծառայողի վերաբերյալ գործարկոմը կարող ե բողոքարկել այդ մասին վարչությունից հայտարարություն ստանալուց յերեք որվա ընթացքում: Յեթե վարչությունը չի հարգում բանկոմ-գործարկոմի բողոքը, գործը հանձնվում ե ԳԿՀ-ին քննության, իսկ վերջինի վորոշումը պարտադիր ե կողմերի համար:

13. Ճարտարապետ-տեխնիկների այն աշխատավորների ընդունելությունները, վորոնք իրենց ցանկությամբ փոխադրվում են ուրիշ ձեռնարկությունից, թույլ ե տրվում միմիայն բանկոմ-խմբկոմի համաձայնությամբ և նախկին աշխատանքի վայրից գրավոր համաձայնություն ներկայացնելուց հետո:

14. Աշխժողկոմատի կադրերի վարչության կողմից գործուղված աշխատավորներին կարելի յե ընդունել և



փորձնական աշխատանք տալ հետեվյալ կարգով.—

Ներկայացնելու րոպեյից հաշված մինչեվ 10 ժամ, իսկ յեթե ժամանակից ուշ ե ներկայացել, վոչ ուշ բանվորական որից: Յեթե այդ ժամանակամիջոցում նրան աշխատանք չհանձնվի, կամ փորձնական աշխատանք չտան վարչությունը պարտավոր ե վճարել նրան ներկայացնելու րոպեյից սկսած մինչեվ գործ հանձնելը կամ Աշխբորսա հետ ուղարկելը: Այդ ժամանակամիջոցի համար տրվում ե աշխատավարձ այն կարգով, ինչ կարգի պահանջ ներկայացված ե յեղել կադրերի վարչությանը, իսկ յեթե պահանջագրի մեջ հաստատեված չինի, պետք ե վճարել այն կարգի համաձայն, ինչ գործի համար վոր ուղարկված ե կադրերի վարչությունից:

15. Աշխատավարձ չի վճարվում յեթե ուղարկված որը Տնտմարմինը մերժում ե ընդունել և հայտնում ե անհամապատասխան լինելու մասին Աշխժողկոմատի կադրերի վարչությանը:

Այն բանվոր-ծառայողները, վորոնք մնում են աշտանք տալու ժամկետը վորոշվում ե՝

բանվորների համար 6 բանվորական որ.

Գրասենյակային և հաշվային ծառայողների համար մինչեվ ավագ հշվետարները ներառյալ 12 բանվորական որ և ավելի բարձր հաշվային, գրասենյակային և ճարտարապետ-տեխնիկ աշխատավորների նկատմամբ 24 բանվորական որ:

Այն բանվոր- ծառայողները, վորոնք մնում են աշխատանքում փորձնական աշխատանքի համարա սահմանված որերից ավելի, համարվում են ընդունված:

17. Բրոնխայի թիվը սահմանվում է 10 հոգի, ըստ վորում առաջին հերթին ընդունվում են զորամասայինների վորդիները և այն բանվորների վորդիները, վորոնք աշխատել են տվյալ տնտմարմնի մոտ, ինչպես և արտադրական արժեքավոր առաջարկներ անողների վորդիները, նախկին պարտիզանների, աշխատանքի հերոսների վորդիներըև մանկատան սաները:

18. Բրիգադային կարգով սովորելու դեպքում տնտմարմինը պարտավոր ե սովորեցնող բրիգադիրներ

նշանակել տեխնիկապես ավելի պատրաստված բանվորների: Բրոնյան և անհատական կարգով սովորող բոլոր աշակերտությունը պետք է փոխադրվեն Շինուսի դըպրոցներում սովորելու համար վոչ ուշ քան 1-ն ապրիլի 1931 թ.:

19. Վարչությունը պարտավոր է լրիվ ապահովել սովորողներին գործիքներով, դասատուների կազմով, և բոլոր նյութերով, վորոնք գործադրվելու յեն նրանց արտադրական պրակտիկայի ընթացքում: Բացի այդ ապահովելու նրանց համապատասխան շենքով կահավորված արհեստանոցի սարքավորմամբ:

20. Սովորելու ընթացքում Վարչությունը պարտավոր է վեց ամիս մեկ անգամ պարբերաբար վերանայել աշակերտության վորակը և անցկացնել նրանց համաձայն փորձնական աշխատանքի ավելի բարձր կարգի: Աշակերտներին թույլ է տրվում ժամանակից առաջ տալ փորձնական աշխատանք բարձր կարգի անցնելու համար: Այն աշակերտներին, վորոնք ավարտել են ուսումը Վարչությունը պարտավոր է օգտագործել մշտական աշխատանքներում իրենց արհեստի մեջ:

21. Ավարտական տարվա յերկրորդ կիսում աշակերտներին պետք է թույլ տալ ինքնուրույն աշխատելու արտադրության մեջ: Տրված աշխատանքը կամ հանձնարարությունը լինելու յե իր ունեցած արտադրական պրակտիկայի սահմաններում, այն հաշվով վոր նրա սովորելու վրա վատ չանդրադառնա: Այս դեպքում նրանք վարձատրվում են չափահասների հետ հավասար չափով ըստ գործարքային դրույքների, իսկ կրճատված ժամերի համար նրանց վճարվում է տարիֆային դրույքով աշակերտական ցանցի: Այն աշակերտները, վորոնք աշխատում են գործարքով աշխատող վարպետների մոտ, վորպես յենթավարպետ, ինչպես և գործարքով աշխատող բրիգադում, ստանում են նաև գերարտադրական միջին տոկոսը համաձայն իրենց տարիֆ դրույքի:

22. Տնտմարմինը պարտավոր է 1931 թվի համար բաց թողնված գումարների սահմաններում վերապատրաստել գործադուրկ չափահաս բանվորներին նրանց Շինուս և ֆաբզավուչ դպրոցներում ընդունելու համար այդ մասին նախորոք, սակայն վոչ ուշ 1-ն մայիսի 31 թվի կնքելով պայմանագիր Աշխժողկոմատի կադրերի բաժնի հետ:



23. Կադրերի պատրաստման համար տեղական Տնտեսությունը պարտավոր է հատկացնել 3 տոկոս աշխատավարձի վորպես կադրերի պատրաստման ու վերապատրաստման ֆոնդ: Այդ գումարը Տեղ. Տնտեսությունը հատկացնում է Աշխժողկոմատին Ուստանովկայի միջոցով կադրեր պատրաստելու համար, վորի համար պայմանագիր պետք է կնքել վոչ ուշ, քան ապրիլի 15-ը:

24. Յեթե շենքի վրա աշխատում են 200-ից վոչ պակաս յերիտասարդ սեվագործ բանվորություն և շենքի ավարտելը կարող է մի տարուց ավելի տևել, անհրաժեշտ է կազմակերպել մեկ տարվա տևողությամբ դասընթացներ՝ այդ յերիտասարդության համար՝ վորակավորելու ավելի վորակյալ աշխատանքի համար: Դասընթացների համար տնտմարմինը տրամադրելու յե համապատասխան շենք իր կահավորությամբ, ինչպես նաև հոգալու յե դասատուների ծախքը: Այդ դասընթացների ավարտողներին պետք է հանձնարարել ավելի բարձր վորակի աշխատանք, համաձայն նրանց ձեռք բերած վորակի: Թեորիայից և պրակտիկայից պարապելու համար տնտմարմինը պարտավոր է սովորողներին ազատել աշխատանքից ամսական 10 ժամից վոչ ավելի:

ԾԱՆՈԹՈՒԹ. Ազատ ժամերը պետք է այնպես դասավորել, վոր չխանգարի աշխատանքների նորմալ ընթացքին:

25. Վորակը բարձրացնելու համար սովորող բանվորներին վճարվելու յե աշխատավարձ հետևյալ կարգով՝ տվյալ ձեռնարկության սև աշխատավորներին և անորակ բանվորներին, վորոնք վերավորակավորման նպատակով ազատված են աշխատանքներից վորոշ ժամանակով, աշխատավարձը վճարվելու յե գործարքի գնացուցակներով վոչ պակաս իր տարիֆային դրույքից:

ԾԱՆՈԹՈՒԹ. Կենտրոնական Աշխ. ինստիտուտի (ՑԻՏ) կուրսերն ավարտողները, վորոնք այնտեղ աշխատանք են

կատարում, վոր չի արդարացնում համապատասխան նորման, առաջին յերկու ամսվա ընթացքում պետք է պահովել տարիֆ. դրույքով, իսկ հետագայում նույնպես չարդարացնելու դեպքում պահովելը չպետք է անցնի տարիֆ. դրույքի յերկու յերրորդից:

26. Վորակավորման դասընթացներն ավարտած ճարտարապետա-տեխնիկ աշխատավորները, ծառայողները, ինչպես նաև այն աշակերտները, վորոնք սովորել են Ֆինուսներում, պարտավոր են աշխատել ավյալ ձեռնարկությունում վոչ պակաս 2 տարուց:

27. Գործարքով աշխատող վորակյալ այն բանվորները, վորոնք իրենց անմիջական աշխատանքների հետ զուգընթաց բրիգադային կամ անհատական կարգով աշակերտներ են ուսուցանում, տնտամարմինը պարտավոր է այդպիսիներին լրացուցիչ կերպով վարձատրել վոչ պակաս, սովորող աշակերտների ամսական աշխատավարձի 15%-ից: Յեթե աշակերտների ուսուցումը կատարվում է բրիգադայի միջոցով, ապա բրիգադայում յեղած բոլոր վորակյալ բանվորներին (սկսած 4-րդ կարգից) նույնպես տնտամարմնի հաշվին տրվում է լրացուցիչ վարձատրություն, սովորող աշակերտների ամսական աշխատավարձի 15%-ի չափով, վորպիսի գումարը բաժանվում է բրիգադայում աշխատող վորակյալ բանվորների միջև ըստ նրանց տարիֆային կարգերի:

ԾԱՆՈԹՈՒԹ. Նույն կարգով վարձատրվում են նաև այն բանվորները, վորոնց ղեկավարությամբ սովորում են չափահաս բանվորներ: Սովորեցնողներին աշակերտների աշխատավարձի 10 տոկոսի չափով տրվելիք վարձատրությունը տնտամարմինը հոգալու յե բանվորների վորակավորման և վերավորակավորման համար առանձնացված հատուկ ֆոնդից:

28. Վարչությունը պարտավոր է արտելների փոխարեն կազմակերպել ցեխային բրիգադներ և նշանակել բրիգադիրներ: Բրիգադիրներ նշանակվում են առաջին հերթին հարվածայինները, լավագույն արտադրական բանվորները, արժեքավոր արտադրական առաջարկներ անողները և գյուտարարները: Բրիգադիրը պար-



տավոր է իր բրիգադայի հետ հավասար չափով աշխատել և ստանալ աշխատավարձ իր բրիգադային հասանելիք կարգով: 40 հոգուց ավել կազմով բրիգադայի համար թույլ է տրվում ունենալ ազատ բրիգադիր տնտամարմնի հաշվով, վորն ստանալու յե կրտսեր տասնապետի դրույքով, սակայն վոչ պակաս իր բրիգադայում ստացած միջին աշխատավարձից:

29 Համաձայն Համամիութենական Աշխժողկոմատի, ԺՏԽ-ի և Հաղորդակցության ժողկոմատի ու կառուցողների արհմիության կենտկոմի 1930 թվի № 349-29 հրջաբերականի տնտամարմինը պարտավոր է ինքնամբացման յենթարկել շինարարության վրա աշխատող բանվորներին:

ԾԱՆՈԹՈՒԹ. Յեթե ինքնամբացման պայման կնքած բանվորը հեռանում է աշխատանքից պայմանաժամից շուտ իր կամքով, կամ ներքին կարգապահության կանոնները խախտելու հետևանքով հեռացվելու դեպքում, համաձայն ԳԿՀ-ի վորոշման տնտամարմինը պահում է նման բանվորների վճարած աշխատավարձից այն գումարը, վորը տրվել է նրան վորպես ճանապարհածախս:

Տնտամարմինը պարտավոր է վճարել իր բնակության վայրից վերադարձող բանվորին ճանապարհածախս, յեթե ճանապարհը 1000 կիլոմետրից ավելի յե:

30. Բանվոր-ծառայողների կրճատումը կատարվում է վարչության և գործարկոմի նախորոք կայացրած համաձայնությամբ: Աշակերտները մինչև գործի վերջնական ավարտումը կրճատման յենթակա չեն, այլ փոխադրվում են այլ աշխատանքի: Հաստիքի կրճատման դեպքում աշխատանքի մնալու նախապատվությունը տրվում է՝ 1. Արհմիության անդամներին, 2. 1931 թվի զինակոչի յենթականերին, 3. Հարվածային բանվոր-ծառայողներին, ինչպես նաև յերկար ժամանակ ձեռնարկությունում աշխատողներին, վորոնք նկատողության կամ տուգանքի յենթարկված չեն յեղել. Արտադրական կոմունաների անդամներին, 5. Քաղաքի այն բանվորներին, վորոնք գյուղական յեկամուտներով չեն օգտվում: 6. Կենտրոնական Աշխ. ինստիտուտ

(ՅԻՏ), Շինաս և յերկա․ բանվորական դպրոցներն ավարտողներին և 7․ ինքնամբացման պայման կնքողներին:

31․ Այն հեռացողը, վորը համաձայն չէ վարչության առաջարկած ցածր աշխատանքը կատարելուն, մինչեվ հեռացնելը վարչությունը պարտավոր է հայտնել գործարկոմին, կամ բանկոմ-խմբկոմին այդ մասին գործարկոմը բոլոր դեպքերում գործը հանձնելու յե ԳԿ Հանձնաժողովին:

Ժամանակավորապես աշխատունակությունը կորցրած աշխատավորներին արձակել թույլատրվում է, յեթե այդպիսին չորս ամսից ավելի գործի չի հաճախում (չհաշված հղիության և արձակուրդ): Աշխատանքի ընթացքում պատահած դժբախտ պատահարների հետեվանքով ժամանակավորապես աշխատունակությունը կորցրածին արգելվում է հեռացնել մինչև առողջանալը, կամ բժշկական հանձնաժողովի կողմից աշխատունակության աստիճան վորոշելը, սակայն այդպիսին չըպետք է ավելի լինի նախատեսված չորս ամսից:

32․ Բանվոր-ծառայողները, վորոնք աշխատում են շինարարության վրա և համաձայն աշխօրենսգրքի 47 հոդ․ «ա» և «բ» կետերի պետք է հեռացվեն, վարչությունը պարտավոր է հեռացնելուց առաջ նախազգուշացնել հետեվյալ կարգով՝ մեկ ամսից վոչ ավել աշխատողներին մեկ որ առաջ, մինչեվ 6 ամիս աշխատողներին 7 որ առաջ և 6 ամսից ավելի աշխատողներին՝ 15 որ առաջ: Հեռացողներին պետք է հայտարարել գրավոր, վերցնելով նրանցից այդ մասին ստորագրություն, բացի այդ հաշվեգրքույկում պետք է նշանակել հեռացման ժամկետը:

33․ Վարչության կարգադրությամբ կամ աշխատանքների կրճատման հետեվանքով աշխատանքից կրճատվող որավարձ և գործարքով աշխատող բանվորների հաշիվները փակել վոչ ուշ կրճատման հետեվյալ որը, իսկ գործարքով աշխատողների վերջնական հաշիվները պետք է փակել կրճատման որից հաշված 3 որվա ընթացքում:



Բանվորի արձակման որը համարվում է նրանց հետ վերջնական հաշիվների փակման որը, յեթե բանվորներին հասանելիք բոլոր տեսակի գումարները վերեվում ընդունված ժամանակամիջոցում լրիվ չեն վճարվի, բանվորները համարվում են աշխատանքի մեջ մինչև նրանց հետ վերջնական հաշիվների փակման որը, վորպիսի ժամանակի համար այդպիսիները տնտմարմնի կողմից պետք է վարձատրվեն վոչ պակաս տարիֆային դրույքներից:

34․ Յեթե բրիգադայում աշխատողների 50 տոկոսը և ավելին հեռանում են գործից դեռ աշխատանքները չվերջացրած, նրանց վճարվում է տարիֆային կարգով և վերջնական հաշիվները նրանց հետ փակվում են մոտիկ ապագայում, յերբ ամբողջ բրիգադը լուծարքի յենթարկվի: Հեռացողները յեթե տվյալ վայրից ես հեռանում են, լուծարքից հետո նրանց հասանելիք գումարը տնտմարմինն իր հաշվով փոխադրելու յե նրանց հասցեների համաձայն:

Յեթե տնտմարմնի կարգադրությամբ բրիգադայի մի մասը հեռացվում է Աշխօրենսգրքի 47-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի համաձայն, տնտմարմինը պարտավոր է չափել, հաշվել կատարած աշխատանքները և փակել նրանց հետ վերջնական հաշիվը:

35․ Այն բանվոր-ծառայողները, վորոնք իրենց ցանկությամբ հեռանում են աշխատանքից, պետք է նախազգուշացնեն վարչությանը 15 որ առաջ․ նախազգուշացումը կատարվելու յե վորոշ որերում, վորպիսի որերը վորոշվում է բանկոմի և վարչության փոխհամաձայնությամբ: Այն բանվորները, վորոնք չեն նախազգուշացրել 15 որ առաջ հեռանալու մասին, տրվում է վերջնական հաշիվ բանվորների աշխատավարձ ստանալու հերթական որը:

## ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տնտմարմինը իրավունք չունի պահանջել աշխատավորից այնպիսի աշխատանք, վորը չի վերաբերում նրա արհեստին: Յեթե համապատասխան աշխատանք



1499
Гос. Публ. библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
12305-57

չլինի, աշխատողին կարելի չէ փոխադրել այլ աշխատանքի, տալով նրան վարձատրություն համաձայն նրա վերջին աշխատանքի գնահատության, սակայն վոչ պակաս իր տարիֆային դրույքից: Յեթե բանվորին փոխադրում են իր արհեստին բոլորովին անհամապատասխան գործի վոչ իր վորակի համաձայն, այդ դեպքում նա կարող է ստանալ հեռացման նպաստ և ազատվել աշխատանքից:

36. Գործարքով աշխատող բանվորներին իրենց աշխատանքները դեռ չվերջացրած որավարձային աշխատանքի փոխադրելու դեպքում, մինչև նախկին գործարքային աշխատանքի վերադառնալը, որավարձի աշխատանքում չեղած ժամանակամիջոցի համար վարձատրվում են բրիգադայում չեղած միջին աշխատավարձով:

37. Յեթե բանվոր ծառայողին շինարարական վորևե տեղից փոխադրում են մի ուրիշ վայր աշխատելու, նրանց վճարվելու յեն փոխադրության փաստացի ծախքերը, բացի այդ պետք է վճարել տեղափոխվելու որից աշխատավարձը միջին աշխատավարձի հաշվով: Յեթե բանվորը աշխատել է այդտեղ 5 ամսից ավելի, նրան պետք է վճարել նաև վերադարձի ճանապարհածախսը մինչև իր բնակավայրը:

38. Տնտամարմինը պարտավոր է այն ձեռնարկներում, ուր աշխատում են 1000 հոգուց ավելի բանվոր ծառայողներ, պահելու հատուկ պատասխանատու աշխատակից, վորը պետք է զբաղվի միմիայն բանվոր ծառայողների վարձելու, արձակելու, բանվորներին մի ցեխից մի այլ ցեխ տեղափոխելու գործով և այլն: Այդ աշխատակցի թեկնածությունը նախորոք պետք է համաձայնեցնել բանկոմ-ֆաբկոմների հետ:

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁ յեվ ՆՈՐՄԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ

39. Բոլոր գործերում կիրառվելու յեն գործարքային աշխատանքի ձևը, առանց գերակատարումի սահմանափակման, որավարձային աշխատանք թույլատրվում



և միայն նորմիրովկայի չենթարկվող աշխատանքներում: Ակկորդային աշխատանքներ թույլատրվում է բացառիկ դեպքերում, այն էլ միության գիտությամբ ու համաձայնությամբ:

40. Տնտամարմինը պարտավոր է սույն պայմանագիրը ստուգելու որից մեկ ամսվա ընթացքում մշակել և համաձայնեցնել միության պարգևատրումների ձևը և կարգը, ինչպես գործարքով այնպես էլ այն աշխատանքների համար, վորոնք չեն յենթարկվում նորմիրովկայի: Պարգևատրումները կատարվում են հետևյալ դեպքում՝ յերբ նկատվում է արտադրության վորակի բարձրացում, բրակի իջեցում, նյութերի և հումույթի խնայողական գործադրում, պրաստոյների տոկոսների իջեցում, տրված աշխատանքների լավագույն կատարման ցուցանիշներ և այլն:

41. Առանձին աշխատանքների վարձատրությունը
կատարվում է միության հետ համաձայնեցված միաց-
յալ շրջանային գնացուցակների համաձայն, վորպիսի
գնացուցակը պարտադիր է աշխատանքի նորմալ պայ-
մաններում և համապատասխան վորակի չինանյութեր
ունենալու դեպքում: Գնացուցակներից վոչ հարգելի
պատճառներով շեղումներ կատարելը արգելվում է:

42. Միանմական նորմաներով նախատեսված արտադրության պայմանների բացակայության դեպքում,
յերբ հնարավոր չէ գնահատել կամ փոխել աշխատանքի
այն պայմանները, վորոնք ազդում են աշխատանքների
վրա ցածրացնելով այն, գնահատությունը կատարվելու
յե Գ. Կ. հանձնաժողովի կողմից: Գ. Կ. հանձնաժողովը
քննության է առնում և գնահատում է նաև աշխատանք-
ները, յերբ ձեռնարկության մեջ խիստ նորություն է կի-
րառվում և ստեղծում է աշխատանքի հատուկ պայման-
ներ. օրինակ՝ ռացիոնալացում, այս կամ այն գործի
կազմակերպչական տեխնիկական բարելավում և այլն:
վորոնք բանվորի աշխատավարձը բարձրացնելու յեն:
Բոլոր նման դեպքերում տնտամարմինը պետք է սառ-
զի գնացուցակում կատարված բոլոր փոփոխու-
թյունները, իսկ Գ. Կ. Հ-ն իր հերթին պետք է արձա-

նագրի այն պատճառները, վորոնց հետևանքով կատարվել են գնացուցակների իջեցում կամ ավելացում: Գ. Կ.-ի կատարած փոփոխությունները վերաբերելու յեն միայն տվյալ աշխատանքին և վոչ թե ամբողջ շինարարության:

ԳԿՀ.-ի կատարած գնացուցակի փոփոխությունները կարող են տարածվել նաև բոլոր այն շինարարությունների վրա, ԳԿՀ-ի կազմած միջգերատեսչական կարգով (ամենամեծ շինարարության ներկայացուցչի մասնակցությամբ) և արհմիության ներկայացուցչի մասնակցությամբ: Աշխատանքներում առաջացած բոլոր աննորմալությունների մասին բանվորները պարտավոր են հայտնել վարչությանը: Վերջինս այդ մասին կազմելու յե արձանագրություն:

43. Տնտմարմինը և միությունը հավասար չափով պատասխանատու յեն այն գնացուցակների ճիշտ կիրառման և չեղումների համար, վորոնք կազմված են շինարարության և շինանյութեր արտադրող ձեռնարկությունների բանվորների համար:

Միութենական կազմակերպությունները սույն պայմանագրի համաձայն պարտավոր են իրենց վրա վերցնել պայմանագրի ճիշտ կիրառման պարբերաբար հսկողությունը, գնացուցակների կիրառումը գործարաններում և շինարարություններում տանել բացատրական աշխատանքներ բանվորական մասսաների մեջ՝ գնացուցակների նշանակության մասին և տեխնիկական նորմիրովկայի կատարած դերի ու դիսցիպլինայի մասին: Կենտրոնացնել բանվորների ուշադրությունը և ոժանդակությունը տեխնիկական նորմիրովկայի գործն ավելի ուժեղացնելու ձեռնհաս համապատասխան բանվորների առաջ քաշումը, հատկապես հարվածայիններից լրացնելու տեխ. նորմիրովկայի աշխատողների թիվը, իր ժամանակին տեղեկացնել վերադաս մարմիններին և Աշխժողկոմատին, վարչության պատճառով տեղի ունեցած գնացուցակների խախտումների մասին և միջոց-



ներ ձեռք առնել գնացուցակների դիսցիպլինան ամուր հիմքերի վրա դնելու:

Աշխատանքի արտադրողականության լրիվ հաշվետվություն պահանջել չին. որգաններից, ապահովել հսկողությունը և իր ոժանդակությունն այդ խընդրում: Ձեռք առնել միջոցներ անմիջապես կանխելու շինարարության մեջ առաջացած ընդմիջումները, վորոնք կասեցնում են արտադրության ընթացքը աշխատանքի բոլոր բնագավառներում: Միաժամանակ անհրաժեշտ է պարբերաբար ուսումնասիրել աշխատավարձի սահմանված նորմաները և ուսումնասիրության արդյունքները ոգտագործել հետագայում աշխատավարձի խնդիրները կարգավորելու համար:

44. Աշխատանքների միացյալ գնացուցակների չնախատեսված աշխատանքների գները մշակվում են տնտմարմնի կողմից, յելնելով տվյալ աշխատանքների կարգի բանվորների միջին աշխատավարձից և արտադրանքի նորմաներից: Համամիութենական միասնական նորմաներում չնախատեսված արտադրական նորմաները (նորմա վիրաբոտկի) և նրանց կարգը սահմանվում է ըստ աշխատանքների բնույթի և վոչ թե աշխատանքի կատարող անձի կարգի: Նորմաների չափը սահմանվում է լավագույն բանվորների արտադրանքի հիման վրա, խրոնոմետրաժի կատարած տվյալներով:

45. Յեթե աշխատանքի գոյություն ունեցող պայմանները այնպես են դասավորված, վոր ամենալավ բանվորը ինտենսիվ աշխատելու դեպքում չի կարողանում արդարացնել աշխատավարձի սահմանված նորման, այդ դեպքում նորմաները չեն փոփոխվում այլ ԿԳՀ-ի վորոշմամբ բարձրացվում են գները:

Բարձրացված գնացուցակները պահպանում են իրենց գոյությունը այնքան ժամանակ, վորքան ժամանակ շարունակեն հիշված առանձնահատուկ պայմանները: Գնացուցակների ամեն մի նման բարձրացում պետք է կատարել տեղում նախորոք հարցը քննելուց հետո: Յեթե աշխատանքի պայմանները նորմալ են և բանվորը չի կարողանում արդարացնել իր նորման, այդ

դեպքում գնացուցակների բարձրացում չի կատարվում:
Յեթե աշխատանքի տեխնիկական կազմակերպման պայմանները բարելավվում են և աշխատանքի արտադրողականությունն սկսում է բարձրանալ անկախ բանվորի աշխատանքի պայմաններից, աշխատավարձի պայմանները և նորմաները վերամշակվում են ԳԿՀ-ի միջոցով 6 որվա ընթացքում, իսկ առանձին բարդությունների դեպքում 12 որվա ընթացքում:

46. Յեթե բանվորի ձեռներեցությամբ վորևե աշխատանքի մեջ բարելավություն է մտցվում, վորով բարձրանում է արտադրողականությունը, գնացուցակի նորման այդ բանվորի վերաբերմամբ յենթարկվում է փոփոխման և տրվում է բանվորին բացի փոխհատուցումից նաև վերջին յերեք ամիսների համար նոր գնացուցակների տարբերությունը, անկախ նրանից թե տվյալ բանվորը անհատապես թե բրիգադայի մեջ է աշխատում:

47. Այն դեպքում, յեթե աշխատանքները կատարվում են կոլեկտիվ կերպով (հարվածային բրիգադներ, արտադրական կոլլեկտիվներ և այլն) վարձատրության ընդհանուր նորմաները վորոշվելու յեն ամեն դեպքում աշխատանքի բնույթի և կատարման մասերի համաձայն հայտարարելով այդ մասին բանվորներին:

48. Հարմարություններ ստեղծելու, աշխատավայրը կահավորելու համար կորցրած ժամանակի և աշխատանքի վարձատրությունը (Վարչության գիտությամբ և կարգադրությամբ) հաշվելու յե առանձին անկախ գործարքից, իբրև ինքնուրույն աշխատանք, համաձայն միջին աշխատավարձի:

49. Նորմաների և գնացուցակների առթիվ վարչության և բանվորների մեջ հարուցված կոնֆլիկտները լուծվում են ԳԿՀ-ի կողմից: Մինչև կոնֆլիկտների լուծելը բանվորները իրավունք չունեն հրաժարվել աշխատանքից, յեթե նույնիսկ նրանք համաձայն չլինեն տվյալ գնացուցակով աշխատելու:

ԾԱՆՈԹՈՒԹ. Այն աշխատանքների վարձատրությունը, վորպիսին բանվորը կատարել է վարձատրության մասին



կոնֆլիկտ հարուցելու ժամանակամիջոցում, ԳԿՀ-ին դիմում տալու օրից վճարվելու յե աշխատավարձ համաձայն ԳԿՀ-ի վորոշման, սակայն վոչ պակաս նրան գործը հանձնելու որը պայմանավորվածից: ԳԿՀ-ի վորոշումից հետո այդ աշխատանքը վարձատրվում է համաձայն ԳԿՀ-ի վորոշման, թեկուզ այդ վորոշմամբ ավելի ցածր վարձ հասնի բանվորին, քան թե վարչությունն էր սահմանել աշխատանքը հանձնելուց:

50. Գործարքով աշխատող այն բանվորներին, վորոնց նշանակում են նոր սարքած մեքենաների, ստանոկների, կամ նյութը վարձելու այդ փորձի ժամանակամիջոցում վճարելու յե բանվորին իր միջին աշխատավարձից վոչ պակաս:

51. Գործարքով աշխատանք բանվորին հանձնելու դեպքում վարչությունը պարտավոր է նախորոք բացատրել գործի բնույթը, չափը, գնահատությունը և աշխատանքի ժամանակին տեվողությունը, վորպիսին պահանջում է տվյալ գործը: Յեթե տրված աշխատանքի գները գնացուցակով նախատեսված չեն, գները վորոշվում են ԳԿՀ-ի միջոցով:

ԾԱՆՈԹՈՒԹ. Բանվորները իրավունք չունեն հրաժարվելու տրված գործից, սակայն այդ հանգամանքը չի արգելում նրանց բողոքել ԳԿՀ-ի վորոշման դեմ:

52. Կառուցողների Արհմիության Կենտկոմի մշակած տարիֆային տեղեկագրի համաձայն պետք է վորոշել բանվորի կատեգորիան, թե անհատապես և թե բրիգադայի մեջ աշխատելու դեպքում, վոչ ուշ քան նրա ընդունելու 7-րդ որը, համաձայն կատարող աշխատանքի վորակի և վոչ թե աշխատանք կատարող անձի վորակի:

53. Թույլատրվում է բանվորի կատեգորիան վորոշել բրիգադայի հայեցողությամբ, յեթե վարչությունը 7 որվա ընթացքում չի վորոշել նրա կատեգորիան: Նըման դեպքում մինչև բանվորի կատեգորիայի վորոշումը, բանվորն ստանալու յե վարձատրության այն չափով, ինչ չափով նախկին աշխատավայրում ստացել է:

54. Աշխատանքի հանձնումը և չափելը անպայմա-

նորեն կատարվելու յեն բրիգադայի մասնակցությամբ: Չափելու և հանձնելու համար գործադրված ժամանակամիջոցի մասին պետք է հիշատակել ստացողա-հանձնողական արձանագրության մեջ և այդ ժամանակի համար տնտմարմինը վճարելու յե մասնակցողին միջին աշխատավարձի չափով: Հանձնման արձանագրությունը ստորագրվում է յերկու կողմերի միջոցով նրա առաջին իսկ պահանջի դեպքում:

Աշխատավորի տարեկան տարիֆ. դրույքի առաջին կարգի համար սահմանվում է՝ բանվորների համար 1 ռուբլի 72 կոպ., իսկ առաջին կարգի աշակերտների համար 1. ռուբ. 12 կոպ., աշխատավարձի բաշխումը կատարվում է հետևյալ տարիֆ. ցանցով:

| Բանվորների համար կարգ | Փոխհարաբերություն | Աշակերտի համար կարգ | Փոխհարաբերություն |
|---|---|---|---|
| 1-ին կարգ | 1,0 | 1-ին կարգ | 1,0 |
| 2-րդ » | 1,25 | 2-րդ » | 1,30 |
| 3-րդ » | 1,45 | 3-րդ » | 1,60 |
| 4-րդ » | 1,60 | 4-րդ » | 1,90 |
| 5-րդ » | 1,80 | | |
| 6-րդ » | 2,10 | | |
| 7-րդ » | 2,5 | | |

ԾԱՆՈԹՈՒԹ. 1. Աշակերտները աշակերտական ցանցով տարիֆիկացիայի յեն յենթարկվում միայն 2 տարվա ուսման ընթացքում, սովորելու տևողությունը 3 տարի լինելու դեպքում վերջին տարում վճարումը կատարվում է ընդհանուր բանվորական ցանցի համաձայն այն հաշվով, վորպեսզի վերջին կիսամյակում ստանա մի կարգով ցած այն արհեստի կարգից, վորով նա գրանցվելու յե դպրոցն ավարտելուց հետո, բայց վոչ պակաս այն աշխատավարձից, վորն ստացել է չինուսում:

ԾԱՆՈԹՈՒԹ. 2. Բոլոր շենքերի և վարչությունների աշխատող ծառայողների համար սահմանվում է ամսական աշխատավարձ պաշտոնական դրույքների ձևով:

55. Տնտմարմինը պարտավոր է գոյություն ունեցող խմբակների փոխարեն կազմակերպել միևնույն արհեստի բանվորներից բրիգադներ, բրիգադիրների ղեկավարությամբ: Բրիգադիրները նշանակվում են տնտմարմնի կողմից. այն բրիգադները, վորոնք կազմված են կենտ. աշխ. ինստիտուտի դասընթացներն ավարտողներից, ավարտելուց հետո յերեք ամիս շարունակ պետք է աշխատեն տնտմարմնի կողմից նշանակված առանձին հրահանգչի ղեկավարությամբ և վարձատրվում են վորպես կրտսեր տեխ. պերսոնալ: Յերեք ամիսը լրանալուց հետո վարչությունը նշանակում է բրիգադայի միջից մեկին իբրև ղեկավար բրիգադիր, իսկ հրահանգչին նշանակում է նոր ավարտած ցիտովցիների նոր խմբակների ղեկավար:

56. Աշխատավարձը վճարվելու յե ամսական յերկու անգամ, ըստ վորում առաջին 15 օրվա համար տրվելու յե ավանս, օրավարձի դրույքի հաշվով, իսկ յերկրորդ 15 օրվա աշխատավարձը վճարելուց փակելու յե վերջնական հաշիվը ամբողջ ամսվա համար համաձայն կատարած աշխատանքների: Յեթե աշխատողի հանգստի օրը զուգադիպում է աշխատավարձ վճարելու օրվա հետ, այդ դեպքում նրանց աշխատավարձը պետք է տրվի հանգստի օրվա նախօրյակին: Աշխատավարձը պետք է վճարել աշխատանքի ժամերին և աշխատանքի վայրում: Բրիգադաներին, կոլեկտիվներին և արտադրական կոմունաներին աշխատավարձ տրվում է կոլեկտիվ ձևով, այդ ձևով վճարելը պետք է լինի աշխատավորի ցանկությամբ: Տնտմարմինը պարտավոր է ամեն նման դեպքում անհատական հաշվառում կատարել աշխատանքի և աշխատավարձի:

57. Տնտմարմինը պարտավոր է տրամադրել բանվորներին համապատասխան գործիքներ և շինանյութ, իսկ սեփական գործիքներ չունենալու պատճառով գործի չընդունելը արգելվում է: Յեթե բանվորը աշխատում է իր սեփական գործիքներով, տնտմարմինը պարտավոր է բացի աշխատավարձը վճարել նաև առանձնապես գործիքները մաշվելու համար դրամական փոխհատուցում ամեն յերեք ամիս մեկ անգամ, համաձայն կազմված ցուցակների:

## ԲՐԱԿՆԵՐ ՅԵՎ ՊՐՈՍՏՈՅՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄ

58. Սահմանված աշխատավարձով բանվորը պարտավոր է կատարել լավ վորակի աշխատանք: Վատ վորակի աշխատանքը, վորը առաջացել է բանվորի մեղքով, նա պարտավոր է նորից վերաշինել առանց առանձին վարձատրության: Տնտմարմինը ստացված վատ գործիքներ կամ չինանյութեր հայտաբերելու դեպքում վորի պատճառով կարող է գործը փչանալ կամ ուշանալ, բանվորը անմիջապես պետք է հայտնի տնտմարմնին: Վարչա-տեխնիկական անձինք իրենց սխալ կարգադրությամբ յերբ պատճառ են դառնում անորակ և վատ աշխատանք առաջանալուն, առանձնապես նյութական պատասխանատվության են յենթարկվում պատճառած վնասի համար, բացառությամբ այն դեպքերից, յերբ այդ արված է տեխնիկական անվտանգության պահպանման համար, կամ կախված այն վորոշ վտանգի հետ: Նման դեպքում աշխատանքի այն մասը, վորը անորակ կճանաչվի կվարձատրվի սահմանված հատուկ գնացուցակներով: Առանց վարչության կարգադրության անորակ աշխատանք կատարելու և չինանյութեր փչացնելու դեպքում վնասները պահանջվելու յեն տույժերի ցուցակի համաձայն: Յեթե բանվորի հանցանքով փչացած աշխատանքը նորից օգտագործվելու յե ձեռնարկության կողմից, այդպիսին վճարվելու յե իջեցրած գնահատությամբ, հակառակ դեպքում համաձայն ԳԿՀ-ի վորոշման: Նյութը փչացնելու վնասը պահանջվում է և գանձվում է փչացնողներից, սակայն այն վոչ ավել նրան տարիֆային դրույքի 1/3-ից մինչև ամբողջ վնասի գումարի ծածկելը:

59. Բանվորի կամ բանվորների խմբի անփույթ վերաբերմունքի, տեխնիկական ներքին կանոնների խախտման, վարչության կարգադրությունները չկատարելու հետևանքով առաջացած վնասների և դիտավորյալ ձևով աշխատանքը չկատարելու համար աշխատանքի վարձ չի վճարվում և հանցավորներին գործից հեռացնում են առանց լուծարքային նպաստի:

60. Աշխատավորը պարտավոր է անմիջապես հայտնել վարչությանը և ցեխկոմին պրոստոյի դեպքում, բացի այդ իրենից կախված բոլոր հնարավոր միջոցները պետք է գործ դնի և նախազգուշացնի վարչության առաջ գալիք պրոստոյի կանխելուն: Հակառակ դեպքում պրոստոյի համար չի վճարվում և բանվորը պետք է յենթարկվի պատասխանատվության համաձայն տույժերի ցուցակի:

61. Վարչությունը պարտավոր է միջոցներ ձեռք առնել պրոստոյները կանխելու, հակառակ դեպքում, յերբ այդ անխուսափելի յե, պարտավոր է բանվորներին փոխադրել ուրիշ աշխատանքի: Վարչության պատճառով առաջացած պրոստոյների (յերբ այդ անխուսափելի յե, կամ ժամանակին կարգադրություն չի արված) համար հանցավորները յենթարկվում են պատասխանատվության, բացի այդ վճարում են իրենց անփութությունից առաջացած բոլոր վնասները:

62. Պրոստոյների համար վճարվում է՝ ա). Յերեք օրից վոչ ավելի պրոստոյի համար միջին աշխատավարձի չափով. բ). յերեք օրից ավելի պրոստոյի դեպքում տարիֆային դրույքով, հաշվելով այն պրոստոյի սկսվելու օրից:

63. Վատ յեղանակներին (անձրև, և այլ մթնոլորտային տեղումներ և յերևույթներ), յերբ բացօթյա աշխատանք անհնար է լինում, վարչության իրավունք է վերապահվում փոխադրել բանվորներին ծածկի տակ և տալ նրանց համաձայն իրենց վորակի աշխատանք և վճարել տվյալ աշխատանքի գնացուցակով, սակայն վոչ պակաս տարիֆային դրույքից:

Փոխադրել ծածկի տակ և հանձնել այնպիսի աշխատանք, վորը չի համապատասխանում իրենց վորակին և վճարել միջին աշխատավարձի հաշվով: Ծածկի տակ աշխատանք տալ հնարավոր չլինելու դեպքում տնտմարմինը վճարելու յե բանվորներին չաշխատած օրերի վարձը, համաձայն տարիֆային դրույքի:

ԾԱՆՈԹՈՒԹ. Աշխատանքը շարունակվելը անհնար լինելու դեպքում վորոշում է կենտվարչությունը համապատասխան արձանագրությամբ:

## ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

64. Պարգևատրվում են այն բոլոր բանվորները, վորոնք քանակական և վորակական ցուցանիշներով լրիվ կատարում են իրենց հանձնարարված աշխատանքի նորմաները: Պարգևատրման չափը կախված է աշխատանքի քանակից, վորակից և տնտեսումից:

Պարգևատրման ֆակտորներն են հետևյալ ցուցանիշները:

ա) Առանձին միավորներում չինանյութերի ծախսման մեջ տնտեսում մտցնելը:

բ) Պրոստոյների տոկոսի իջեցումը.

գ) Բրակի իջեցում:

դ) Արտադրանքի վորակի լավացում.

Վարչությունը պարտավոր է մինչև ապրիլի մեկը մեկ ամսվա ժամանակամիջոցում մշակել և գործարկոմի հետ համաձայնեցնել պարգևատրման կանոնները, թված ցուցանիշների համաձայն և վոչ ուշ քան մայիսի մեկը կյանքում կիրառել:

ԾԱՆՈԹՈՒԹ..— Տնտմասմինը պարտավորվում է պարգևատրել լավ աշխատողներին՝ գործնական ու թեորետիկ աշխատանքներում առաջադիմելու համար, արտադրության մեջ աշխատելու, վորակի ու քանակի ցուցանիշների լրիվ նորման կատարելու դեպքում, լավ կարգապահության համար, գյուտարարության և արժեքավոր առաջարկներ անելու դեպքում:

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

65. Տնտմասմինը պարտավոր է մեկ ամսվա ընթացարտադրական խորհրդակցության և անհատ բանվորների առաջարկները յերեք որվա ընթացքում և հայտնել առաջարկի հեղինակին վորոշման հետևանքները: Ռացիոնալացման նպատակով տնտմասմինին հատկացված.. ..ռուբ. պետք է վորոշված լինի, թե վոր գործարանին կամ շենքին, վոր մասն է հատկացվելու: Գործարանների և շենքերի մեջ նույնպես իրենց հատկացվածը բաշխվելու յե ըստ ցեխերի:



66. Տնտմասմինը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում մշակել և համաձայնեցնել գործարկոմ-բանկոմի հետ հարվածայինների և սոցմրցման մասնակցողների աշխատանքների հաշվառման ձևը, վորպեսզի հնարավոր լինի հաշվառումը կատարել 32 թվի մայիսի մեկից:

67. Գյուտարարների վորակը բարձրացնելու համար վարչությունը պարտավոր է տեխնիկական և կազմակերպչական ոժանդակություն ցույց տալ գյուտարարներին:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐԸ ՅԵՎ ՀԱՆԳԻՍՏԸ

68. Արտաժամյա աշխատանքներ և հանգստի որերին աշխատել չի թույլատրվում: Արտադրության անհրաժեշտ դեպքում թույլատրվում է արտաժամյա աշխատանք, սակայն նախորոք համաձայնություն կայացնելով տնտմարամնի և միության միջև ստանալով Աշխժողկոմատի թույլտվությունն այդ առթիվ:

Արտաժամյա աշխատանքը վարձատրվում է հետևյալ ձևով՝

ա. Աշխատողն ստանալու յե արտաժամյա աշխատանքի առաջին յերկու ժամերի համար ամեն մի ժամին իրեն տարիֆային դրույքի 1 և ½ չափով:

բ. Գործարքով աշխատողները արտաժամյա աշխատելու դեպքում ստանալու յեն առաջին յերկու ժամվա համար ամեն մի ժամի փոխարեն 1 և ½ ժամվա իր տարիֆային դրույքը, իսկ հետևյալ ժամերի համար ամեն մի ժամին մեկ ու կես ժամվա իր տարիֆային դրույքի աշխատավարձի չափով:

Բացառիկ դեպքերում, յերբ աշխատավորը հնարավորություն չի ունենում իր հանգստի որը հանգստանալու նրան թույլատրվում է առաջիկա 12 որից մեկում ստանալ մեկ առանձին հանգստի որ:

ԾԱՆՈԹՈՒԹ.— Աշակերտներին վոչ մի դեպքում չի թույլատրվում արտաժամյա աշխատանքներ տալ և հանգստի որերն աշխատեցնել:

69. Չափավորված բանվորական որ է սահմանվում ըստ սույն պայմանագրին կցված պաշտոնների ցուցակ-

ների: Կոմտնտբաժինը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում կազմել և համաձայնեցնել բանկոմի հետ չըչափավորված բանվորական որ ունեցող աշխատավորների վերաբերյալ աշխատանքի կանոնները:

70. Յերկու շաբաթվա արձակուրդի (12 բանվորական որ) հարցը նոր ընդունվող բանվորների կողմից կարող է հարուցվել կոմբաժնի առաջ միայն 11 ամիս անընդհատ աշխատելուց հետո:

Բանվորական տարին հաշվելու յե Կոմտնտբաժնի մոտ 12 ամիս ընդունված որից աշխատելով:

Յերկրորդ անգամ արձակուրդ ստանալու հարցը կարելի յե հարուցել նախկին բանվորական տարում աշխատելուց հետո և հինգ ու կես ամիս լրիվ Կոմտնտբաժնում աշխատանքը շարունակելուց հետո:

Արձակուրդը վորպես որենք տրվում է որացուցային տարվա սկզբին կամ վերջին, իսկ աշակերտներին տրրվում է անպայման ամառվա ամիսներին: Առանձին դեպքում կարելի յե տալ նաև տարվա ընթացքում, յեթե աշխատանքի բնույթը թույլ է տալիս արձակուրդ գնալու:

ԾԱՆՈԹՈՒԹ. Յեթե տնտամարմինը փոխադրում է աշխատավորին ուրիշ աշխատավայր, կամ Աշխժողկոմատի կարգադրությամբ նա փոխադրվում է այլ տնտամարմնի մոտ աշխատելու, աշխատանքի ստաժը վոր արձակուրդի իրավունք է տալիս չի ընդհատվում:

Տնտամարմնի կողմից աշխատանքից արձակվածներին կամ իրենց կամքով հեռացվողներին 11 ամիս պակաս աշխատած լինելու դեպքում տրվում է արձակուրդի փոխհատուցում իրեն ստացած աշխատավարձի 4 տոկոսի չափով, ավյալ տնտամարմնի մոտ իրենց աշխատած ամբողջ ժամանակի համար, սակայն այն հաշվով, վոր տրված գումարը չգերազանցի նրանց միջին աշխատավարձի հաշվով 12 որվա վարձից: Այն աշխատավորները, վորոնք յերկրորդ աշխատանքի տարում նույն տնտամարմնի մոտ հինգ ամիս աշխատելուց հետո հեռացվում է աշխօրենսգրքի 47-րդ հոդ. ա. և բ. կետերի համաձայն, ինչպես և նրանք, վորոնք կկանչվեն զին–



վորական ծառայության, կամ կգործուղվեն սովորելու ստանալու յեն արձակուրդի փոխարեն դրամական փոխհատուցում 12 որվա միջին աշխատավարձի չափով այն աշակերտները, վորոնք աշխատել են հինգ և կեսից մինչև 11 ամիս և հեռացված են, բացի վերև հիշված պատճառներից այլ պատճառներով, ինչպես և իրենց կամքով հեռացվողները, նաև նրանք, վորոնք հինգ ամսից պակաս են աշխատել անկախ հեռացման պատճառներից ըստանալու յեն իբրև արձակուրդի փոխհատուցում ամեն մի աշխատած ամսի համար մի որվա վարձատրություն

71. Անչափահասները նույն տնտամարմնի մոտ հինգ և կես ամիս աշխատելուց հետո ձեռք են բերում մի ամսվա արձակուրդի իրավունք, ամբողջ տարվա համար չօգտագործված արձակուրդի դիմաց անչափահասներին դրամական փոխհատուցում է տրվում նրանց վճարած աշխատավարձի 8 տոկոսի չափով: Չափահաս դառնալու մոմենտից, յեթե նրանք հերթական արձակուրդ չեն ստացել, այդ դեպքում արձակուրդ տրվելու յե բացի սահմանված յերկու շաբաթվանը նաև լրացուցիչ ամեն մի ծառայած ամսի համար մեկական որ, հաշվելով այն մինչև չափահաս դառնալու որը:

ԾԱՆՈԹՈՒԹ. 1. Չչափավորված բանվորական որ ունեցող աշխատավորներին տրվելու յե լրացուցիչ արձակուրդ, համաձայն սույն պայմանագրին կցված ցուցակի:

ԾԱՆՈԹՈՒԹ. 2. Յերկու տարի անընդհատ աշխատող բանվորները հաշվելով 1930 թ. նոյեմբերի մեկից, վորոնք աշխատել են շինարարության, արտադրող ձեռնարկություններում, ստանալու յեն բացի որենքով սահմանվածից նաև լրացուցիչ արձակուրդ 3 բանվորական որ, կամ փոխհատուցում 3 որվա աշխատավարձի չափով:

ԾԱՆՈԹՈՒԹ. 3. Այն բանվորներն ու տեխնիկական պերսոնալը, վորոնք լավագույն աշխատողներն են արտադրության մեջ (հարվածայիններ և սոցմրցման մասնակցողներ), վորոնք յերկար ժամանակ աշխատել են ավյալ հիմնարկ-ձեռնարկությունում և լավ վորակի աշխատանք են

կատարել, արտադրական խորհրդակցություններում արժեքավոր առաջարկներ են մտցրել, կամ գյուտարարության մեջ աչքի յեն ընկել, խրախուսվելու յեն վարչության կողմից. առաջին հերթին ուղարկվելու յեն տեխնիկական ԲՈՒՀ-երը սովորելու, հանգստյան տներ, կուրորտներ և առաջին հերթին ոգտվելու յեն դեֆիցիտային ապրանքներից:

ԾԱՆՈԹՈՒԹ. 4. Անչափահասներին, վորոնք աշխատում են վնասակար և ծանր գործերում և վորոնք նախատեսված են որենքով, տրվելու յե լրացուցիչ արձակուրդ յերկու շաբաթով:

72. Տեխնիկական պերսոնալի արձակուրդ գնալու կարգը սահմանվում է վարչության կողմից, նախապես համաձայնության գալով գործարկոմի և ՃՏՍ-ի հետ հետևյալ ձևով՝

ա. Չչափավորված բանվորական որ ունեցող ճարտարապետա-տեխնիկ աշխատավորների համար սահմանվում է տարեկան յերեք շաբաթից մինչև մեկ ամսվա արձակուրդ, յելնելով նրանց աշխատանքի ծանրաբեռնվածությունից, ըստ կցված պաշտոնների ցուցակի:

73. 1931 թ. արդֆինպլանում նախատեսված աշխատանքի պաշտպանության վարկի սահմաններում վարչությունը պարտավոր է կատարել տեխնիկական անվտանգության սանիտարական և աշխատանքի առողջապահության բոլոր ձեռնարկումները, համաձայն աշխատեսչության և վարչության միջև համաձայնեցված ու ստորագրված կարգով:: Վարչությունը պարտավոր է նաև վոչ ուշ 31 թ. սկզբին կառուցել բոլոր խոշոր և միջակ շինարարական օբյեկտներին կից համապատասխան շենք ճաշարանների համար: Բացի դրանից, վարչությունը պարտավորվում է շենքին կից ունենալ լվացարաններ, վերջինների մոտ ունենալով օճառ:

74. Բանվորներին առաջին ոգնություն հասցնելու համար վարչությունը պարտավոր է յուրաքանչյուր շենքում ունենալ ապտեչկաներ:

75. Տնտմարմինը աշխատանքները սկսելուն պես պարտավոր է ապահովել յեկվոր և իրենց պահանջով



այլ տեղերից յեկած բանվորներին հանրակացարաններով, վորպիսին կահավորված պետք է լինի սեղաններով, տումբոչկաներով, մատրասներով, բարձերով ու լվացարաններով, պահպանելով հանրակացարաններում սանիտարական և աշխատանքի առողջապահության բոլոր պայմանները: Բնակարանները պետք է տրամադրվեն կառուցող բանվորներին մինչև շինարարության ավարտելը: Բնակելի շենքերի մի մասը պետք է հատկացնել ընտանիքավոր վորակյալ ու դեֆիցիտային արհեստի բանվորներին և նրանց, վորոնք յերկար ժամանակ կապված են տվյալ շինարարության հետ: Բոլոր դեպքերում բնակարանները բաշխելիս (բացի զուտ ամառային բնակարաններից, վրաններից) կարող են սահմանվել բնակարանային վարձ և կոմունալ ծախսեր գրաղեցրած բնակարանների համար համապատասխան աշխատավարձի չափով (դիֆերենցիալ հարաբերությամբ) համաձայն ՀԱՄԿԽ-ի և Համամիութենական ԺՏԽ-ի 1929 թ. ոգոստոսի 5-7-ի կարգադրության: Աշակերտներին բնակարաններ տրամադրվում են ձրիաբար: Տնտմարմինը և Պրոֆմիությունը պարտավորվում են խրախուսել յերկարատև բանվորության ձեռնարկումները որինակելի ցուցադրական հանրակացարաններ և կոմունաներ կազմակերպելու խնդրում: Տնտմարմինը պարտավոր է առաջին հերթին տրամադրել նրանց կահավորված բնակարանները:

ԾԱՆՈԹՈՒԹ. 1. Տնտմարմնին պատկանող բնակարանների բաշխումը կատարվելու յե վարչության և բանկոմի փոխադարձ համաձայնությամբ, ըստ վորում բնակարաններ առաջին հերթին տրվելու յեն հարվածային բանվորներին, յերկար ժամանակ տվյալ շինարարություններում աշխատողներին և նրանց, վորոնք ինքնամրացման կարգով աշխատելու յեն տվյալ հիմնարկում մինչև 5-ամյակի վերջը:

ԾԱՆՈԹՈՒԹ. 2. Յեթե ամառային տիպի շենքեր են տրամադրվում բանվորներին (բարակներ, վրաններ և չտաքացնող շենքեր) կոմունալ ծախքեր և բնակարանի վարձ չի գանձվում:

76. Անձնավորությունները, վորոնց տնտմարմինը պարտադրում է ապրել շինարարության սահմաններում, այդպիսիներին բնակարան տրվելու յե ձրիաբար տնտմարմնի հաշվին:

77. Իրենց կամքով հեռացողները կամ ներքին կանոնների խախտման պատճառով հեռացվածները պարտավոր են հինգ օրվա ընթացքում ազատել բնակարանները:

Ծանոթություն.— Այն աշխատավորներին, վորոնց խնամքի տակ ապրում են անչափահասներ կամ ծերացածներ, 5 օրվա փոխարեն կարելի յե թույլ տալ, վոր բնակարանը 15 օրվա ընթացքում ազատեն:

Ծանոթութ. 2. Սույն միջոցի կիրառումը չի վերաբերում նրանց, վորոնց ընտանիքի կերակրողը դժբախտ պատահարի հետեվանքով մահացել է, նման դեպքում թույլ է տրվում զբաղեցնել բնակարանը մինչեվ 3 ամիս:

78. Շինարարության մեջ աշխատող բանվոր-ծառայողներին արտահագուստ տրվում է համաձայն Աշխժողկոմատի 1930 թվի ապրիլի 22-ի № 161 վորոշման: Արտահագուստը ձեռնարկության սեփականություն է և նույնիսկ մաշվելու դեպքում պետք է վերադարձնել տնտմարմնին: Մինչև հին արտահագուստը չվերադարձվի, նորը չի տրվի: Գործից հեռանալու ժամանակ բանվորը պարտավոր է անմիջապես վերադարձնել արտահագուստը ձեռնարկությանը: Արտահագուստը յուրացնողները յենթարկվում են պատասխանատվության և արժեքը գանձվում է յուրացնողից շուկայի գներով: Այդ մասին առաջ յեկած վեճերը քննվելու յեն ԳԿՀ-ի միջոցով:

Մեծ շինարարություններում վարչությունը պարտավոր է ունենալ առանձին պահարաններ արտահագուստները և գործիքները պահելու համար: Տնտմարմինը պարտավոր է լվանալ տալ և կարկատել իր հաշվով արտահագուստները և վոտնամանները:

ԾԱՆՈԹՈՒԹ. Աշակերտները արտահագուստ ստանալու յեն չափահաս բանվորների հետ հավասար, այն արհեստների նորմայով, վորի համար նրանք պատրաստվում են:



79. Շինարարությունում առաջացած դժբախտ պատահարից մահացած բանվորների ընտանիքին վարչությունը պարտավոր է տալ նպաստ մահացածի միջին աշխատավարձի հաշվով մեկ ամսվա համար, անկախ ապահովագրական գանձարկղի տված նպաստից:

80. Քաղաքից դուրս գտնվող այն կառուցումները, ուր բացակայում են հասարակական բաղնիքներ, տնտմարմինը պարտավոր է հիշյալ շինարարության վրա ըզբաղված աշխատավորներին ապահովել բաղնիքով, ընդվորում բաղնիքի ոգտագործման պայմանները պետք է դասավորել այնպես վորպեսզի աշխատավորի խնամքի տակ գտնվող ընտանիքի անդամները եվս հնարավորություն ունենան ոգտվել բաղնիքից:

ԾԱՆՈԹՈՒԹ. 1. Բոլոր անչափահասները և աշակերտները ոգտվելու յեն կոմունալ ծառայություններից (բաղնիք, լվացքատուն և այլն) ձրիաբար):

ԾԱՆՈԹՈՒԹ. 2. Բանվորի հիվանդության դեպքում հանրակացարանում նրա տեղը պահվում է մինչեվ հիվանդությունից վերադառնալը:

81. 500-ից ավելի բանվորներ ունեցող մեծ շենքերում տնտմարմինը պարտավոր է իր հաշվով պահելու հատուկ աշխատակից ազատված բոլոր կողմնակի աշխատանքներից՝ տեխնիկական անվտանգության հսկողության համար, վորպիսի աշխատակիցը պետք է լինի տեխնիկական կրթությամբ:

Սոց. կենցաղային խմբակի ներկայացուցիչները տեղկոմի պահանջով կարիք յեղած ժամանակ ազատվելու են աշխատանքից, աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության հարցերը քննելու համար ըդհանուր առմամբ վոչ ավել մեկ հոգուց ամսվա մեջ յերկու օր: Այդ օրերի համար տեղկոմը վճարելու յե աշխատավարձ իր միջին աշխատավարձի հաշվով:

## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ, ՏԵՂԿՈՄԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

82. Տվյալ ձեռնարկության մեջ միութենական աշխատանքները կատարելու և միութենական մարմին պահպանելու համար տնտմարմինը պարտավոր է հատկացնել 1%-ի չափով, վորպես տեղկոմական և 1%-ի չափով, վորպես կուլտ-կրթական (ընդամենը յերկու տոկոս), վորոնք վճարվելու յե վոչ ուշ քան աշխատավարձը վճարելուց յերեք օր հետո:

ԾԱՆՈԹՈՒԹ. Սույն պարագրաֆում տրված բոլոր մուծումները տնտմարմինը պարտավոր է վճարել, կամ փոխանցել այն տեղկոմի ընթացիկ հաշվին: Ամեն անգամ վճարումները կատարելիս պետք է պահանջել նրանից ստացագիր ստորագրված տեղկոմի մյուս յերկու անդամների կողմից և ստացողի ազգանունը (ստորագրության ձևը) տեղկոմ, խմբկոմի հաստատմամբ նախօրոք ուղարկվելու յե տնտմարմնին:

83. Բացի թված ծախքերից տնտմարմինը տրամադրելու յե նաև տեղկոմին մի սենյակ իր կահավորությամբ (գրասեղան, աթոռ և այլն): Բացի այդ և դահ, առնվազն ամիսը մեկ անգամ ընդհանուր ժողովներ հրավիրելու համար:

Յեթե տեղկոմի գրասենյակը գտնվում է ձեռնարկությունից դուրս, տնտմարմինը պարտավոր է վճարել տեղկոմին շենքի վարձ ամսական 10 ռուբլի: Բացի այդ թե շենքում և թե հանրակացարաններում տնտմարմինը պարտավոր է տրամադրել տեղկոմին հատուկ սենյակ կահավորված, լուսավորությամբ ու վառելիքով՝ մասսայական խմբակային պարապմունքները կատարելու և կարմիր անկյան նպատակներին ծառայեցնելու համար:

84. Խորհրդային, կուսակցական, կոոպերատիվ, պրոֆեսիոնալ և այլ հասարակական մարմինների կողմից հրավիրված համագումարների, կոնֆերանսների և պլենումներին մասնակցելու համար ընտրված պատգամավորների աշխատավարձը, նրանց անվողության ամբողջ ժամանակաշրջանում վճարվելու յե տնտմարմնի կողմից ընտրված պատգամավորների միջին աշխատավարձի հաշվով: Բրիգադայի մեջ ընտրված բանվորներին (տնտմարմնի և միության փոխադարձ համաձայնությամբ նույնպես վճարվելու յե միջին աշխատավարձի հաշվով բրիգադայի մեջ աշխատելու ժամանակամիջոցի համար:



## ՃԱՐՏԱՐԱՊԵՏ-ՏԵԽՆԻԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

85. Հավաքական պայմանագրի սույն մասը տարածվում է ճարտարապետ-տեխնիկների բոլոր տեսակի պաշտոնյաների վրա ճարտարապետ-տեխնիկական աշխատավորների տարիֆ տեղեկատվով նախատեսված բոլոր պաշտոնների աշխատակիցների վրա, ինչպես նաև սույն պայմանագրին կցված ցուցակում նախատեսված պաշտոնների վրա:

ԾԱՆՈԹՈՒԹ. Վարչա-տեխնիկական ղեկավարող պաշտոնների համար (աշխ. ղեկ. և բարձր պաշտոններ) թեկնածուներ առաջարկում է միությունը,ըստ վորում նրանց ընդունելու վերջնական վորոշումը թողնվում է տնտմարմնին:

86. Ճարտարապետ-տեխնիկական աշխատավորներին աշխատանքից հեռացնելու դեպքում համաձայն աշխօրենսգրքի 47-րդ հոդ. ա. և բ. կետերի պետք է նախազգուշացնել գրավոր ձևով մեկ ամիս առաջ: Իրենց ցանկությամբ հեռանալու դեպքում ճարտարապետ-տեխնիկ աշխատավորները պարտավոր են մեկ ամիս առաջ հայտնել վարչությունը գրավոր ձևով, վորի մասին վարչությունը պետք է հայտնի Աշխժողկոմատին:

ԾԱՆՈԹՈՒԹ. Այն դեպքում, յերբ հանձնարարված աշխատանքները կիսավարտ են, կամ դեռ չեն հանձնված տնտմարմնին ՃՏՍ-ի համաձայնությամբ կարող է հետաձգվել հեռացումը մինչև գործի վերջնական ավարտումը տալով աշխատավորին առանձին վարձատրություն:

87. Ճարտարապետ–տեխնիկական աշխատանքների վարձատրության չափը սահմանվում է Կառուցողների կենտկոմի 1930 թվի հրատարակած տարիֆ տեղեկատվով:

| Կարգ | Փոխհարաբերություն |
|---|---|
| 1-ին կարգ | 1,0 |
| 2-րդ » | 1,10 |
| 3-րդ » | 1.20 |
| 4-րդ » | 1,30 |
| 5-րդ » | 1,40 |
| 6-րդ » | 1,55 |
| 7-րդ » | 1,70 |
| 8-րդ » | 1,85 |
| 9-րդ » | 2,00 |
| 10-րդ » | 2,20 |
| 11-րդ » | 2,40 |
| 12-րդ » | 2,50 |
| 13-րդ » | 2,85 |
| 14-րդ » | 3,15 |
| 15-րդ » | 3,50 |
| 16-րդ » | 4,00 |

Ճարտարապետ–տեխնիկական աշխատավորների տարիֆային կարգի ամսական ռոճիկը սահմանվում է 125 ռուբ.: Կարգերի բաժանումը ըստ պաշտոնների կատարում է տնտմարմինը, որի առթիվ առաջացած կոնֆլիկտները քննվում են ԳԿՀ–ի միջոցով, հրավիրելով ՃՏՍ–ի ներկայացուցչին:

Այն պաշտոնները, որ չեն նախատեսված կառուցողների կենտկոմի կազմած տարիֆ տեղեկատվով այս կամ այն ճարտարապետ տեխնիկի համար վորոշում է ԳԿՀ–ն, համապատասխան տվյալ անձի աշխատանքի բնույթի, դասելով նրան տարիֆ. տեղեկատվով նախատեսված պաշտոններից մեկի կարգում:



88. Տեխնիկական արտադրական նվաճումների համար ճարտարապետ–տեխնիկ աշխատավորները պարգևատրվելու յեն Աշխպաշտպանության խորհրդի 1929 թ. 11 հրհանգի համաձայն:

89. Ճարտարապետ–տեխնիկ աշխատավորների ընդունելությունը, տեղափոխելը, աշխատանքից հեռացնելը կատարվում է վարչության միջոցով տեղեկացնելով այդ մասին ՃՏՍ–ին և բանկոմին: Վարչությունը, գործարկոմը և ՃՏՍ–ն պարտավոր են պարբերաբար պայքարել բանուժի և ճարտարապետ–տեխնիկների հոսունության դեմ:

90. Ցեխերի պետը, վարպետները և ոգնականները առողջության համար վտանգավոր պայմաններում աշխատելու դեպքում ստանում են վնասը չեզոքացնող միջոցներ:

91. Ճարտարապետ–տեխնիկների արձակուրդները սահմանվում են վարչության միջոցով և համաձայնեցվում են ՃՏՍ–ի հետ հետևյալ ձևով.—

ա. Չչափավորված բանվորական որ ունեցող ճարտարապետ–տեխնիկներին միության և տնտմարմնի համաձայնությամբ տրվելու յե յերեք շաբաթից մինչև մեկ ամիս հաշվելով նրա մեջ իր հերթական արձակուրդը:

բ. Ցեխի պետը, վարպետները և ոգնականները առողջության համար վտանգավոր պայմաններում աշխատելու դեպքում ստանում են արձակուրդ նույն ցեխի բանվորներին հավասար:

92. Ճարտարապետ– տեխնիկների վորակը բարձրացնելու համար տնտմարմինը պարտավոր է՝

ա. Գործուղել նրանց լրացուցիչ կերպով վերավորակավորելու համապատասխան դասընթացներ, ՃՏՍ-ի հետ համաձայնության գալով վերապատրաստման ուղարկվելիք թեկնածուների թվի և անձնավորությունների մասին:

բ. Իր հաշվին մեկ հոգու գործուղել միության շինարարության զանազան վայրերը գիտական եքսկուրսիաներ կատարելու համար.

գ. Իր հաշվին գործուղել գիտական տեխնիկական համագումարները և խորհրդակցությունները մասնակցելու համար: Բոլոր նման դեպքերում ուղարկվածի միջին աշխատավարձը պահպանվում է:

դ. Կազմակերպել տեխնիկական գրադարան և գոյություն ունեցածները լրացնել նոր գրքերով, որպեսզի ճարտարապետա-տեխնիկները օգտվեն այդ գրադարանից: Ճարտարապետա-տեխնիկ աշխատավորներին թույլատրվում է իրենց ազատ ժամերին օգտվել արտադրական գիտական փորձերով, արխիվներից, թանգարաններից, լաբորատորիաներից այն պայմանով, որ իրենց նորմալ աշխատանքի ընթացքը չտուժի:

ե. Ճարտարապետա-տեխնիկների մեջ պրոֆ. աշխատանք տանելու համար ձեռնարկությունը որևէ մեկ ժամ պետք է ազատի այն մասնագետին, որը ցույց կտրվի ՃՏՄ-ի կողմից:

զ. ՃՏՄ-ն միության հետ միասին պարտավոր է տանել աշխատանք ճարտարապետա-տեխնիկներին ամրացնելու տնտմարմնին մինչև շինարարության աշխատանքները վերջանալը, կամ մինչև հնգամյակի վերջը: Տնտմարմինը պարտավոր է հատկացնել համապատասխան միջոցներ ճարտարապետա-տեխնիկ աշխատավորներին պարգևատրելու, յեթե նրանց կողմից ռացիոնալացման արժեքավոր առաջարկներ են յեղել:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀՈԴՎԱԾՆԵՐ

93. Տնտմարմինը պարտավոր է մշակել ներքին կարգապահության կանոններ յելնելով Աշխժողկոմատի կողմից հաստատված որինակելի նախագծից և յելնելով տեղական պայմաններից՝ մտցնել համապատասխան լրացումներ, որից հետո համաձայնեցնել միության հետ: Ներքին կարգապահությամբ նախատեսված պայմանները կյանքում կիրառվելու յեն Աշխժողկոմատի կողմից հաստատվելուց հետո:

94. Սույն պայմանագրի տպագրության հետ կապված բոլոր տեսակի ծախսերը կատարելու յե տնտմարմինը, բացի դրանից տնտմարմինը պարտավոր է սույն



պայմանագից փոքրիկ գրքույկների ձևով տպագրել առ 500 որինակ հայերեն լեզվով և բաժանել բանվներին ձրիաբար:

95. Բազմացնել գնացուցակները բրոշյուրների ձևով և բաժանել բրիգադայի ամեն մի ներկայացուցչին մեկական որինակ: Վճարել պայմանագիրը կնքելու և գրանցելու բոլոր ծախքերը:

96. Իրավական կողմերը հանդիսանում են Կառուցողների Միությունը և Յերքաղխորհրդի Տեղական Տնտեսության բաժինը:

Կառուցողների Արհմիության Կենտվարչության
ներկայացուցիչ՝ (ԱՐՄ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Յերքաղխորհրդի Կոմ. Տնտ. Բաժնի
վարիչ՝ (Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

# ՑՈՒՑԱԿ

վտանգավոր աշխատանքներում աշխատող բանվոր ծառայողների, վորոնց տրվում է լրացուցիչ արձակուրդ (հավաքական պայմանագրի կետ ) .

## 1. ԹՈՒՆԵԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

1. Ծակողներ . . . . . (բուրիլշչիկի)
2. Զաբյոյշչիկներ
3. Կրեպլիշչիկներ
4. Զապալշչիկներ
5. Ատկաշչիկներ (ատկաշչիկի)
6. Թունելում աշխատող այլ բանվորներ

## 2. ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՎՐԱ ԱՇԽ. ՇՈՖԵՐՆ. ՅԵՎ ՆՐԱՆՑ ՈԳՆԱԿԱՆՆԵՐԸ

## 3. ԳԱԶԻ ՅԵՎ ԿՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Աղացարանների վրա աշխատող բանվորներ
2. Բարձող և դատարկող բանվորներ
3. Պահեստներում աշխատող բանվորներ
4. Գաջի գործարանների վարպետներ

## 4. ԳՐԱՆԻՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Պերֆորատորների վրա աշխատավորներ
2. Մեխանիզացիայի յենթարկված ստանկաների վրա աշխատող բանվորներ (բրուսչատկաներ կտրող).
3. Մեքենայական գործիքներով բրուսչատկաներ աշխատող բանվորներ
4. Մեքենայացման յենթարկված արհեստանոցներում աշխատող բանվորներ.



## 5. ՑԵՄԵՆՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐ

1. Աղացող բանվորներ
2. Պտտվող վառարանների վրա այրող բանվորներ
3. Բեռնող բանվորներ, վորոնք մշտապես զբաղված են շախտային և դույզնեյգեր վառարանների վրա, կրաքար բարձելով
4. Հոֆման-Բերլեցի վառարաններում դասավորող բանվորներ.

## 6. ՌՈՄՆԱԿԱՆ ՑԵՄԵՆՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Շախտինսկի վառարանի բեռնող և թափող բանվորներ
2. Բետոնի աշխատանքների (աշխատանք ջրի մեջ) վրա զբաղված բանվորներ
3. Բանվորներ, վորոնք զբաղված են ներկարարային աշխատանքներում (մետաղի, փայտի կամ շինանյու– աշխատանքներում) և յեթե գործադրում են ավելցովի ներկ. թերի վրա)

## 7. ԳԻԴՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Բոլոր բանվորները, վորոնք կատարում են գիդրոնի և ասֆալտի աշխատանքներ:

սեկտոր՝ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Կոմ. Տնտ. Բաժնի վարիչ՝ (Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

---

# ՑՈՒՑԱԿ

Այն արհեստի բանվորների, վորոնք աշխատում են իրենց գործիքներով և վորոնց գործիքների մաշման համար տրվում է դրամական փոխհատուցում հետևյալ չափով կետ )

. . . . . . . . . . . . 1%

1. Վարմնագիր-քարտաշ . . . . . . . . . . . . ½%
2. Վարմնագիրներին . . .

3. Քարտաշներին . . . . . . . . . . . . . . 1/5%
4. Սվաղչիներին . . . . . . . . . . . . . . ¼%
5. Ներկարարներին . . . . . . . . . . . . . . 1%
6. Թիթեղագործներին . . . . . . . . . . . . . . ½%
7. Ասֆալտագործներին . . . . . . . . . . . . . . ¼%
8. Քարհանքի քար կրող բանվորն . . . . . . . . . 1½%
9. Շերեն ջարդող բանվորներին . . . . . . . . . ½%
10. Ապակի կտրողներին . . . . . . . . . . . . 1%
11. Խզարչիներին . . . . . . . . . . . . 1%
12. Վառարանագործներին . . . . . . . . . . . . ¼%
13. Փականագործներին և ջրմուղ անցկացնող փականագործներին 1 և կես տոկոս . . . . . . . . . . . . 1½%
14. Դարբիններին . . . . . . . . . . . . 1½%
15. Հյուսներին . . . . . . . . . . . . 1%
16. Ատաղձագործներին . . . . . . . . . . . . 1½%

Կ.Մ. Կենտ. Վարչ. Արտ. և Աշխատավ.
սեկտոր՝ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)
Կոմ. Տնտ. Բաժնի
Վարիչ՝ (Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

---

## ՑՈՒՑԱԿ

Այն աշխատակիցների, վորոնք օգտվում են լրացուցիչ արձակուրդ ստանալու իրավունքով (կետ )

1. Բաժնի վարիչին տարեկան մեկ ամսվա արձակուրդ
2. Նրա օգնականը նույնպես
3. Գլխ-ճարտարապետ-մեկ ամիս
4. Ցե-բաժնի վարիչները-մեկ ամիս
5. Գլխ. հաշվապահներին և նրանց տեղակալներին-մեկ ամիս
6. Հաշվապահներին-18 բանվորական օր.
7. Աշխղեկներին-մեկ ամիս
8. Աշխղեկների օգնականներին-մեկ ամիս
9. Արտադրության վրա անմիջականորեն գրավված ճարտ-տեխ.-մեկ ամիս



10. Մեքենագրուհիներին 18 բանվորական օր
11. Պահեստապետ-էքսպեդիտորներին 18 բանվ. օր
12. Կառապաններին-18 բանվորական օր
13. Կենտ. ապիտ վիճակագիրներին-մեկ ամիս
14. Արտելշչիկներին (շրջիկ գանձապահներին)-18 բանվորական օր
15. Քարտուղարին-մեկ ամիս
16. Իրավախորհրդատուներին- 18 բանվորական օր
17. Տասնապետներին և բրիգադիրներին 18 բանվ. օր
18. Ֆուրգոնշչիկներին-18 բանվորական օր

Ցուցակում չնախատեսված պաշտոնների, ինչպես տեխնիկական և այլ արձակուրդը տրվում է ըստ օրենքի:

Կ.Մ. Կենտ. Վարչ. Արտ. և Աշխատավ.
սեկտոր՝ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Կոմ. Տնտ. Բաժնի
Վարիչ՝ (Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

---

## ՑՈՒՑԱԿ

Չչափավորված աշխատանքի որ ունեցող աշխատակիցներ (կետ )

1. Աշխատանքի ղեկավարները և նրանց օգնականները
2. Գլխավոր ճարտարապետները և նրանց օգնականները
3. Արտադրության վրա գրավված բոլոր ճարտ-տեխնիկները.
4. Բոլոր բաժինների և յե-բաժնի վարիչները և նրանց օգնականները
5. Գլխավոր հաշվապահներ նրանց օգնականները
6. Հաշվապահները
7. Տնտեսական վիճակագիրները.
8. Պահեստների վարիչները և պահեստապետները
9. Էքսպեդիտորները

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

10. Սրտեւշշիկները (հրջիկ գանձապահները)
11. Շոֆերները և նրանց օգնականները
12. Կառապանները
13. Ֆուրգոնշշիկները

Կ.Մ. Կենտ. Վարչ. Արտ. և Աշխատավ.
սեկտոր՝ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Կոմ. Տնտ. Բաժնի
վարիչ՝ (Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

ՀՀ Ազգային գրադարան
NL0199193

337